Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1

ք. Երևան ____/_____/2022թ.

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ը ի դեմս Հովհաննես Մովսիսյան ի, որը գործում է « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Սերգեյ Աղագումյան ի, որը գործում է « Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14504010.00 AMD(տասնչորս միլիոն հինգ հարյուր չորս հազար տասդրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։[629][1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային

օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

__[5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի

իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են

պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

—

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	**Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ**
ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26	**ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք**
Արդշինբանկ ՓԲԸ	**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ**
2470102796740000	**25000-10152710100**
01540062	**01570457**
Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608 Date: 2022.05.02 18:19:37 AMST **/ստորագրություն/**	Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153 Date: 2022.04.29 12:15:25 AMST **/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
1	32551170/2	DECT հեր ախոսներ	Panasonic, Panasonic Corporation, KX-TG1611UAW, Panasonic	Աշխատանքային հաճախականությունը 1880-1900 ՄՀg Աշխատանքային միջակայք (փակ տարացք) 50 մ, (բաց տարածք) 300 մ: Դիսպլեյ խոսափողի վրա - Այո Գունավոր դիսպլեյ - Այո Զանգի ազդանշան տտոների քանակը 15 Համարի մուտքագրում Հեռախոսագիրք 50 համար Բարձրախոս Բարձրախոս հեռախոսի վրա Այո Զանգահարողի նույնականացում Զանգահարողի նույնականացման գործառույթ Այո Զանգահարողի նույնականացում Այո Մուտքային զանգերի հիշողությունը 50 համար GAP-ի համատեղելիություն Այո Էլեկտրամատակարարում

				AAA մարտկոցի չափը Մարտկոցների քանակը հեռախոսի մեջ 2 Լիցքավորման ժամանակը 7 ժամ Խոսելու ժամանակը 16 ժամ Մարտկոցի տեսակը 2CR5M Ինտերֆեյս Հեռախոսային գծի մուտքագրում (RJ-11 1 Բնակարանային Բնակարանային նյութ պլաստիկ Սարքավորումներ սնուցման աղբյուր տուփի մեջ Գույնը սև Կցված է 52f4084e.rar
4	30237100/14	Համակարգչի իրան	Rosewill, Rosewill Inc., RSV-L4000U, Rosewill	Rackmount PC Case 4U: Սերվերի արտադրանքի տեսակը Rackmount, Form Factor 4U Նյութը՝ մետաղ, պողպատ, մայր սալիկի համատեղելիություն Ընդլայնված ATX (E-ATX), ATX, Micro ATX, ITX, Mini-ITX, SSI-CEB Արտաքին 5,25 դյույմանոց Drive Bays, 3 ներքին 3,5" Drive Bays 8 Ընդլայնման բնիկներ 7, Առջևի պորտեր 1 x USB 3.0, 1 x USB 2.0 80 մմ օդափոխիչներ 2 x RPM 1500 օդափոխիչներ, 120 մմ օդափոխիչներ, 5 x RPM 1200 օդափոխիչներ կարող է կրել ներքին 8 x 3.5" HDD / 3 x 5.25" սարք (որը կարող է անցնել 4 x 3.5" HDD մոդուլի) ամբողջությամբ Սառեցման դիզայնը կարող է կրել մինչև առջևի 2 x 120 մմ հովացուցիչ օդափոխիչ, 3 x միջին 120 մմ հովացուցիչ օդափոխիչ, և 2 x հետևի 80 մմ հովացուցիչ օդափոխիչ, բոլոր հովացման օդափոխիչները ներառված են, Առջևի դռան սպունգի ֆիլտրի ձևավորում՝ փոշու ներհոսքը նվազագույնի հասցնելու համար, առջևի դուռ՝ բանալիների կողպեքով՝ ավելի լավ անվտանգության համար Համակարգում PCI քարտի ամրագրման հատուկ ձևավորում 7 հատ առավելագույնը, 1 x USB 3.0 և 1 USB 2.0 միակցիչ առջևի – 4U Rackmount 8 Bays, 7 Fans Կցված է 57758478.rar
6	32421200/13	Մալուխ	Benfei, Benfei, 000244black, Benfei	Dual Link DVI-D Մալուխ արականից արական Բարձր արագությամբ թվային փոխանցման արագություն՝ մինչև 9,9 Գբիթ/վրկ Ֆերիտի միջուկը վերացնում է EMI միջամտությունը Ոսկեպատ DVI-ից DVI (24+1) միակցիչ՝ օպտիմալ

				հաղորդունակության համար: Աջակցում է մինչև 2560x1600 լուծումներ, ներառյալ 2560x1440, 1920x1200 և 1080p (Full HD) Նախագծված է կաղապարված լարվածությունից ազատող միակցիչներով՝ երկարակեցության համար, բռնակով քայլքներով՝ հեշտ խցանման և անջատման համար, և մատով սեղմված պտուտակներով՝ ապահով միացման համար Ոսկիապատ միակցիչների, մերկ պղնձե հաղորդիչների, փայլաթիթեղի և հյուսած ծածկույթի համադրությունը ապահովում է մալուխի գերազանց կատարում, առանց ստատիկ փոխանցման և աղմուկի ճնշում: Աջակցում է 120 Հց թարմացման արագությունը մինչև 2560x1440 (1440p). Կցված է c5576261.rar
9	30237132/7	Փոխակերպիչ լար	Logilink, Logilink, CV0127, Logilink	DP արական դեպի HDMI արական մալուխ Միացում 1: DisplayPort / միակցիչ Միացում 2. HDMI ™ տեսակ A / վարդակից Համապատասխանում է DisplayPort 1.1-ին Բանաձև՝ Full HD մինչև FHD 1080p / 60 Հց (2560 x 1600) Տվյալների արագությունը՝ մինչև 8,16 ԳԲիթ/վրկ Աջակցում է՝ RBR, HBR, DPCP, HDCP 1.3, 3D Աջակցում է՝ Dolby Digital, Dolby Digital Plus, DTS, dts-HD, DVD աուդիո, SACD, True HD աուդիո տվյալներ 2x պաշտպանված, Պլաստիկ պատյան, Ոսկեզօծ, Երկարություն՝ 2 մ Փաթեթավորում՝ սորուն, Քաշը՝ 0,091 կգ, Logilink DisplayPort մալուխ, DP / M to HDMI-A / M, 1080p, սպիտակ, 2 մ. Կցված է 0037bed4.rar
11	30237132/10	Փոխարկիչ 2	Benfei, Benfei, 000155black, Benfei	HDMI To VGA լարային մասով, ոսկեպատ, շատ բարձրորակ Կցված է 8721497e.rar
13	30237132/11	DP to DVI փոխարկիչ	Benfei, Benfei, 000228grey, Benfei	AV ինտերֆեյս՝ DisplayPort-ից DVI, Ինտերֆեյս Ստանդարտ՝ DisplayPort 1.1 / DVI, Մուտք՝ DisplayPort Արական Արդյունք՝ DVI-D իգական (մեկ հղում) Աջակցվող թողունակությունը՝ 4,45 Գբիտ/վրկ Մուտքի առավելագույն թույլտվություն՝

				1920x1080@60Hz / 1920x1200@60Hz Ելքի առավելագույն թույլտվություն՝ 1920x1080@60Hz / 1920x1200@60Hz, HDCP աջակցություն՝ HDCP 1.4 Կցված է 7b02dc30.rar
17	30237490/1	Մոնիտոր	DELL Technologies, DELL, E2421HN, DELL	Ցուցադրման տեսակը - LED-backlit LCD մոնիտոր / TFT ակտիվ մատրիցա Էներգետիկ դաս - դաս E Անկյունագծային չափս - 24" Տեսանելի չափ - 23,8" Վահանակի տեսակը - IPS Ասպեկտների հարաբերակցություն - 16:9 Բնական լուծում – Full HD (1080p) 1920 x 1080 60 Հg հաճախականությամբ Pixel Pitch - 0,2745 մմ Պիքսել մեկ դյույմ - 93 Պայծառություն - 250 cd/m² Կոնտրաստ հարաբերակցությունը - 1000:1 Գույնի աջակցություն - 16,7 միլիոն գույներ Արձագանքման ժամանակը - 8 ms (մոխրագույնից մոխրագույն նորմալ); 5 ms (մոխրագույնից մոխրագույն արագ) Ուղղահայաց թարմացման արագություն - 50 - 75 Հg Հորիզոնական թարմացման արագություն - 30 - 83 կՀg Հորիզոնական դիտման անկյուն - 178 Ուղղահայաց դիտման անկյուն - 178 Էկրանի ծածկույթ - հակափայլ 3H կարծրություն Հետևի լույսի տեխնոլոգիա - լուսադիոդային լուսավորություն Առանձնահատկություններ - 72% (CIE 1931) գունային գամմա, 83% (CIE 1976) գունային գամմա, Flicker Free տեխնոլոգիա, Առանց սնդիկի, առանց մկնդեղի ապակի, Dell ComfortView, Low Blue Light տեխնոլոգիա Չափերը (WxDxH) – 21,8 x 6,7 x 16,5 դյույմ – տակդիրով Քաշը - 8,88 ֆունտ Միացում - Ինտերֆեյս - HDMI (HDCP 1.2), VGA Մեխանիկական - Էկրանի դիրքի ճշգրտումներ - թեքություն, թեքության անկյուն, -5/+21 VESA մոնտաժային միջերես - 100 x 100 մմ Տարբեր, - Առանձնահատկություններ - Անվտանգության կողպեքի բնիկ (մալուխի կողպեքը վաճառվում է առանձին), VESA ինտերֆեյսի աջակցություն, Ներառված պարագաներ, VESA պտուտակային ծածկույթ Ներառված մալուխներ - 1 x HDMI մալուխ, 1 x

				սնուցման մալուխ, 1 x VGA մալուխ (միայն EMEA) Համապատասխան ստանդարտներ - RoHS, NFPA 99, առանց BFR, առանց PVC-ի Էլեկտրաէներգիա - մուտքային լարում, AC 100-240 V (50/60 Հց), Էլեկտրաէներգիայի սպառման SDR (միացված ռեժիմ) 16 կՎտժ/1000ժ - Էլեկտրաէներգիայի սպառում (սովորական) 16 Վտ Էլեկտրաէներգիայի սպառումը (Max) - 28 Watt Էլեկտրաէներգիայի սպառում Stand by - 0.3 Watt Էլեկտրաէներգիայի սպառումը Երազ - 0.3 Վտ Էլեկտրաէներգիայի սպառում (Անջատված ռեժիմ) - 0,3 Վտ Չափերը և քաշի մանրամասները Ստենդով - լայնություն՝ 21,8 դյույմ, խորություն՝ 6,7 դյույմ, բարձրություն՝ 16,5 դյույմ, քաշ՝ 8,9 ֆունտ Առանց կանգառի - լայնություն՝ 21,8 խորություն՝ 2 դյույմ, բարձրություն՝ 130,6 դյույմ, քաշ՝ 7,1 ֆունտ Չափերը և քաշը (առաքում) - Առաքման քաշը 12,13 ֆունտ Բնապահպանական ստանդարտներ, TCO հավաստագրված, TCO հավաստագրված, ENERGY STAR վկայագրված - Այո Արտադրողի երաշխիք - փաթեթային ծառայություններ 3 տարվա Ընդլայնված փոխանակման ծառայություն և սահմանափակ սարքավորումների երաշխիք Շրջակա միջավայրի պարամետրեր - նվազագույն գործառնական ջերմաստիճան 32 °F Առավելագույն աշխատանքային ջերմաստիճանը - 104 °F Օպերացիոն խոնավության միջակայք - 10 - 80% (ոչ խտացնող) Կցված է e46d7edb.rar
18	30237137/2	Տեսաքարտ	Gigabyte Technology, Gigabyte, GV-N307TGAMING OC-8GD, Gigabyte	Հիմնական ժամացույց - 1830 ՄՀց (տեղեկանք քարտ՝ 1770 ՄՀց) CUDA® միջուկներ - 6144, Հիշողության ժամացույց - 19000 ՄՀց Հիշողության չափը՝ 8 ԳԲ Հիշողության տեսակը - GDDR6X Հիշողության բազա - 256 բիթ Հիշողության թողունակություն (ԳԲ/վ) - 608 ԳԲ/վ Քարտային ավտոբուս - PCI-E 4.0 x 16 Թվային առավելագույն թույլտվություն - 7680x4320 Բազմակի դիտում - 4

				Քարտի չափս - L=320 W=129 H=55 մմ PCB ձև - ATX DirectX - 12 Ultimate OpenGL - 4.6 Առաջարկվող PSU - 750W Էլեկտրաէներգիայի միակցիչներ - 8 պին * 2 Ելք - DisplayPort 1.4a *2, HDMI 2.1 *2 Gigabyte GeForce RTX™ 3070 Ti GAMING OC 8G Կցված է a8170ce6.rar
19	30211220/1	Սեղանի համակարգիչ 1	Desktop PC i7-1, Հավաված <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ում, Desktop PC i7-1, Desktop PC i7-1	CPU Intel Core i7-12700K 12Gen, 12 միջուկ, 20 թելեր, բազային հաճախականություն 3,6 ԳՀց, տուրբո հաճախականություն 5,0 ԳՀց, քեշ 25 ՄԲ: Մայր տախտակ ASUS ProArt Z690-CREATOR WiFi – Z690 չիպսեթ, 2x PCIe 5.0 x16, 1x PCIe 4.0 x16, 4x M ստեղնաշարեր՝ PCIe 4.0 x4 ռեժիմի աջակցությամբ, Wi-Fi 6E MU-MIMO, Bluetooth 5.2, 8x SATA: 4x DDR5 անցք մինչև 128 ԳԲ 6000 ՄՀց հաճախականությամբ: Մայր տախտակի հետևի պորտեր – 1x 2.5Gb, 1x 10Gb Ethermet պորտ, 1x HDMI 2.1, 2x DP1.4, 6x USB3.2 Gen 2 պորտ, 2x Thundebolt 4 պորտ, ձայն 7.1, BIOS-ի հետադարձ կոճակ, WiFI ալեհավաքի միացման պորտեր: Պրոցեսորի հովացուցիչ Noctua NH-D15- PWM, երկակի աշտարակային հովացուցիչ 2x 140 մմ հովացուցիչներով, առավելագույնը 25 դբ 100% արդյունավետությամբ, 6x պղնձե ջերմային խողովակներ, TDP 220W, MTTF 150000 ժամ. Հիշողություն 2x KINGSTON FURY KF552C40BB-16 - DDR5 2x16GB (ընդհանուր՝ 32GB), 5200Mhz, CL38, ռադիատորներով, Intel XMP 3.0 սերտիֆիկացված հիշողություն: SSD Samsung 980 Pro MZ-V8P1T0BW NVMe m.2, 1TB, PCIe Gen 4.0 x4, MLC, կարդալու/գրելու արագությունը 7000/5000Mbps: IOPS մինչեւ 1 մլն. MTBF 1,5 մլն. 2x VGA քարտեր Gigabyte GV-N307TGAMING OC-8GD – Pci-E 4.0 x16, 8 ԳԲ, GDDR6X, 256 բիթ, OC, հիշողության ժամ 19000 ՄՀց, 608 Գբ/վ, միջուկային ժամացույց 1830 ՄՀց, Cuda միջուկներ 6144, DirectX 12 Ultimate, 3x անաղմուկ հովացուցիչներ, 2x HDMI, 2x DP պորտ: PSU Corsair Professional 1200W, Platinum, APFC, Full

				Modular, 140mm HB օդափոխիչ խելացի RPM կառավարմամբ, MTBF 120K ժամ, հարթ մալուխներ, պաշտպանություն – OCP, SCP, OPP, OVP, OTP: Միակցիչներ – 12x SATA, 4x Molex, 6x VGA 6+2 կեռ: Պատյան NZXT H710 CA-H710B-B1, 2x USB 3.2 Gen1 և 1x USB 3.2 Gen 2 Type-C պորտերով առջևում, 3x 3.5"", 6x 2.5"", նախապես տեղադրված 2x 120 մմ FAN, TG պատուհան, փոշու զտիչներ ներքևում և առջևում, սև: Ներքևի լեռան PSU: Լրիվ չափի ստեղնաշար Logitech K280e, USB, սև, չթափվող շասսի և ցածր պրոֆիլի ստեղներ, մինչև 10 միլիոն ստեղնահարում: Մկնիկ Logitech G402 USB, սև, մալուխի երկարությունը min. 2 մ, 8x ծրագրավորվող կոճակներ, թռիչքի ժամանակ DPI անջատում, թույլտվությունը 240-4000dpi: Ստեղնաշար և մկնիկ նույն արտադրողից: 2x DP to DVI փոխարկիչով մալուխային մասով, 2x HDMI դեպի DVI փոխարկիչով լարային մասով Կցված է 26dbef61.rar
20	30211220/2	Սեղանի համակարգիչ 2	Desktop PC i7-2, Հավաված <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ում, Desktop PC i7-2, Desktop PC i7-2	CPU Intel Core i7-12700K 12Gen, 12 միջուկ, 20 թելեր, բազային հաճախականություն 2,7 ԳՀց, տուրբո հաճախականություն 5,0 ԳՀց, քեշ 25 ՄԲ: Մայր տախտակ Asus Prime Z690-A – Z690 չիպսեթ, 1x PCIe 5.0 x16, 1x PCIe 3.0 x16, 2x PCIe 3.0 x1, 1x PCIe 3.0 x4, 4x Key M սլոտներ՝ PCIe 4.0 x4 ռեժիմի աջակցությամբ, 4x SATA 3.0 x16, 1x PCIe 3.0 x1, 1x PCIe 3.0 x4. 128 ԳԲ 6000 ՄՀց հաճախականությամբ: Մայր տախտակի հետևի պորտեր – 1x 2.5Gb Ethernet միացք, 1x HDMI 2.1, 1x DP1.4, 4x USB3.2 Gen 1 պորտ, 1x USB3.2 Gen 2x2 միացք, 3x USB3.2 Gen 2 պորտ, ձայն 7.1: Պրոցեսորի հովացուցիչ Noctua NH-D9L + second NF-A9 PWM premium fan - PWM, անաղմուկ հովացուցիչ, առավելագույնը 23 դբ 100% արդյունավետությամբ, 2x 92 մմ հովացուցիչ, 4x պղնձե ջերմային խողովակներ, MTTF 150000 ժամ. Հիշողություն 2x Kingston Fury Beast KF556C40BB-16 - DDR5 2x16GB (ընդհանուր՝

				32GB), 5600Mhz, CL38, ռադիատորներով, Intel XMP 3.0 սերտիֆիկացված հիշողություն: SSD Samsung 980 PRO MZ-V8P2T0BW NVMe m.2, 2TB, PCIe Gen 3.0 x4, MLC, կարդալու/գրելու արագությունը 7000/5100Mbps: IOPS նվազագույնը 1 մլն. MTBF 1,5 մլն. HDD SEAGATE Exos ST4000NM00A 4TB, 24/7, SATA, 3,5”, 7,2K, 256Mb քեշ, MTBF 2 մլն. ժամ, բայթ մեկ հատվածի համար 512. VGA քարտ Gigabyte GV-N3050GAMING OC-8GD - 8 ԳԲ, GDDR6, 128 բիթ, OC, հիշողության ժամ 14000 ՄՀց, միջուկային ժամացույց մին. 1821 ՄՀց, Cuda միջուկներ 2560, DirectX 12 Ultimate, 3x անաղմուկ հովացուցիչներ, 2x HDMI, 2x DP պորտ: PSU Fractal Design Ion+ 860W Platinum, APFC, Full Modular, 120mm HB FAN, MTBF 120K ժամ, հարթ մալուխներ, պաշտպանություն – SCP, OPP, OVP, OCP, UVP, OTP: Միակցիչներ – 12x SATA, 4x Molex, 6x VGA 6+2 կեռ: Պատյանների դարակաշար Chenbro RM42300H0112187 4U, 2x USB 2.0 պորտերով առջևում, 6x 5.25" 4x3.5" նախապես տեղադրված 1x120 մմ հովհար առջևում և 2x80 մմ հետևի օդափոխիչով, սև: Կցված է f2e2df45.rar
21	30211220/3	Սեղանի համակարգիչ 3	Desktop PC i5-1, Հավաված <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ում, Desktop PC i5-1, Desktop PC i5-1	CPU Intel Core i5-12600K 12Gen, 10 միջուկ, 16 թելեր, բազային հաճախականություն 2,8 ԳՀց, տուրբո հաճախականություն 4,9 ԳՀց, քեշ 20 ՄԲ: Մայր տախտակ Asus PRIME Z690-P– Z690 չիպսեթ, 1x PCIe 5.0 x16, 1x PCIe 4.0 x16, 2x PCIe 3.0 x16, 1x PCIe 3.0 x1, 3x Key M բնիկներ՝ PCIe 4.0 x4 ռեժիմի աջակցությամբ, 4x SATA, 1 գլխիկ: Մայր տախտակի հետևի պորտեր – 1x 2.5Gb Ethernet պորտ, 1x HDMI 2.1, 1x DP1.4, 2x USB3.2 Gen 1 պորտ, 2x USB2.0 պորտ, 1x USB3.2 Gen 2x2 պորտ, 1x USB3.2 Gen 2 պորտ, ձայն 7.1, PS/ 2 Combo port. Պրոցեսորի հովացուցիչ ZALMAN PERFORMA BLACK CNPS10X - PWM, անաղմուկ հովացուցիչ, առավելագույնը 28 դբ 100% կատարողականությամբ, 1x 120 մմ հովացուցիչ՝ շնաձկների լողակների շեղբերով, 4x պղնձե

				ջերմային խողովակներ, TDP 160W, MTBF 300.000 ժամ. Հիշողություն 2x KINGSTON FURY KF552C40BB-16 16GB- DDR5 2x16GB (ընդհանուր՝ 32GB), 5200Mhz, CL38, ռադիատորներով, Intel XMP 3.0 սերտիֆիկացված հիշողություն: SSD Samsung MZ-V8V500BW 980 NVMe m.2, 500 ԳԲ, PCIe Gen 3.0 x4, MLC, կարդալու/գրելու արագությունը 3100/2600 Մբիթ/վրկ: IOPS 400K: MTBF 1,5 մլն. HDD SEAGATE ST2000DM008 2TB, SATA, 3,5”, 7,2K, 256Mb քեշ: VGA քարտ Gigabyte GV-N3050GAMING OC-8GD - 8 ԳԲ, GDDR6, 128 բիթ, OC, հիշողության ժամ 14000 ՄՀց, միջուկային ժամացույց մին. 1821 ՄՀց, Cuda միջուկներ 2560, DirectX 12 Ultimate, 3x անաղմուկ հովացուցիչներ, 2x HDMI, 2x DP պորտ: PSUThermaltake SPS-730M Smart SE 730W, 87% արդյունավետություն, APFC, կիսամյակային, 140 մմ օդափոխիչ խելացի ջերմաստիճանի կառավարմամբ, MTBF 100K ժամ, հարթ մալուխներ, պաշտպանություն – SCP, OPP, OVP: Միակցիչներ – 6x SATA, 3x Molex, 4x VGA 6+2 կեռ: Պատյան Thermaltake Versa H23, 1x USB 3.0 և 1x USB2.0, 2x 5.25", 3x 3.5", 3x 2.5", 2x 120 մմ օդափոխիչով, պատուհանով, փոշու զտիչով ներքևում, սև: Ներքևի տեղադրման PSU: Ամբողջ չափի ստեղնաշար Logitech K280e, USB, սև, թափվելու դիմացկուն շասսի և ցածր պրոֆիլի ստեղներ, մինչև 10 միլիոն ստեղնահարում: Մկնիկ Logitech B100 USB, սև, մալուխի երկարությունը նվազագույնը 1,8 մ, 1000 DPI, Կոճակների քանակը՝ 3. սև: Կցված է d454fa98.rar
22	30211220/4	Սեղանի համակարգիչ 4	Desktop PC i5-2, Հավաված <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ում, Desktop PC i5-2, Desktop PC i5-2	PC – CPU Intel Core i5-12500 12Gen, 6 միջուկ, 12 թելեր, բազային հաճախականություն 3,0 ԳՀց, տուրբո հաճախականություն 4,6 ԳՀց, քեշ 18 ՄԲ: Մայր տախտակ Asus TUF GAMING B660M-E D4 – B660 չիպսեթ, 1x PCIe 4.0 x16, 1x PCIe 3.0 x16, 1x PCIe 3.0 x1, 2x M ստեղնաշարեր՝ PCIe 4.0 x4 ռեժիմի աջակցությամբ, 4x SATA, 4x DDR4 պորտեր մինչև 1533 GB3hz աջակցությամբ: Մայր

				տախտակի հետևի պորտեր – 1x 2.5Gb Ethernet միացք, 1x HDMI 2.1, 1x DP 1.4, 2x USB3.2 Gen 1 պորտ, 2x USB2.0 միացք, 2x USB3.2 Gen 2 պորտ, ձայն 7.1, PS/2 Combo պորտ: Պրոցեսորի հովացուցիչ ZALMAN PERFORMA BLACK CNPS10X - PWM, անաղմուկ հովացուցիչ, առավելագույնը 28 դբ 100% կատարողականությամբ, 1x 120 մմ հովացուցիչ՝ շնաձկների լողակների շեղբերով, 4x պղնձե ջերմային խողովակներ, TDP 160W, MTBF 300.000 ժամ. Հիշողություն – DDR4 2x Crucial BL8G32C16U4B Ballistix Gaming 2x8GB (ընդհանուր՝ 16GB), 3200Mhz, CL16, ռադիատորներով, Intel XMP 2.0 աջակցություն: SSD Samsung MZ-V8V500BW NVMe m.2, 500 ԳԲ, PCIe Gen 3.0 x4, MLC, կարդալու/գրելու արագությունը 3100/2600 Մբիթ/վրկ: IOPS 400K: MTBF 1,5 մլն. PSU Thermaltake PS-TRS-0500NPCWEU-2 TR2 S 500W, ATX 12V 2.3, 80+ սերտիֆիկացված, APFC, 120 մմ խելացի հովացման օդափոխիչ, MTBF 100K ժամ, ErP պատրաստ: Միակցիչներ – 5x SATA, 4x Molex, 2x VGA 6+2 կեռ: Պատյան Thermaltake Versa H23, 1x USB 3.0 և 1x USB2.0, 2x 5.25", 3x 3.5", 3x 2.5", 2x 120 մմ օդափոխիչով, պատուհանով, փոշու զտիչով ներքևում, սև: Ներքևի տեղադրման PSU: Ամբողջ չափի ստեղնաշար, USB, սև, թափվելու դիմացկուն շասսի և խորը պրոֆիլի ստեղներ Մկնիկ USB, սև, մալուխի երկարությունը 1.8 մ, 1000 DPI, Կոճակների քանակը՝ 3. սև Logitech MK120: Կցված է e1a129ee.rar
23	30211220/5	Սեղանի համակարգիչ 5	Desktop PC i5-3, Հավաված <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ում, Desktop PC i5-3, Desktop PC i5-3	CPU Intel Core i5-12600K 12Gen, 10 միջուկ, 16 թել, բազային հաճախականություն 2,8 ԳՀց, տուրբո հաճախականություն 4,9 ԳՀց, քեշ 20 ՄԲ: Մայր տախտակ Asus PRIME Z690-P – Z690 չիպսեթ, 1x PCIe 5.0 x16, 1x PCIe 4.0 x16, 2x PCIe 3.0 x16, 1x PCIe 3.0 x1, 3x M ստեղնաշարեր՝ PCIe 4.0 x4 ռեժիմի աջակցությամբ, 4x SATA Thundertx 1 գլխիկ: Մայր տախտակի հետևի պորտեր –

				1x 2.5Gb Ethernet պորտ, 1x HDMI 2.1, 1x DP1.4, 2x USB3.2 Gen 1 պորտ, 2x USB2.0 պորտ, 1x USB3.2 Gen 2x2 պորտ, 1x USB3.2 Gen 2 պորտ, ձայն 7.1, PS/ 2 Combo պորտ. Պրոցեսորի հովացուցիչ ZALMAN PERFORMA BLACK CNPS10X - PWM, անաղմուկ հովացուցիչ, առավելագույնը 28 դբ 100% կատարողականությամբ, 1x 120 մմ հովացուցիչ՝ շնաձկների լողակների շեղբերով, 4x պղնձե ջերմային խողովակներ, TDP 160W, MTBF 300.000 ժամ. Հիշողություն 2x KINGSTON FURY KF552C40BB-16 - DDR5 2x16GB (ընդհանուր՝ 32GB), 5200Mhz, CL38, ռադիատորներով, Intel XMP 3.0 սերտիֆիկացված հիշողություն: SSD Samsung MZ-V8V500BW NVMe m.2, 500 ԳԲ, PCIe Gen 3.0 x4, MLC, կարդալու/գրելու արագությունը 3100/2600 Մբիթ/վրկ: IOPS 400K: MTBF 1,5 մլն. HDD SEAGATE Exos 4TB ST4000NM00A 24/7 load, 4TB, SATA, 3.5”, 7.2K, 256Mb cache, MTBF 2 մլն. ժամ, բայթ մեկ հատվածի համար 512. VGA քարտ Gigabyte GV-N3060GAMING OC-12GD – Pci-E 4.0 x16, 12 ԳԲ, GDDR6, 192 բիթ, OC, հիշողության ժամ 15000 ՄՀց, 360 Գբ/վ, միջուկային ժամացույց մին. 1836 ՄՀց, Cuda միջուկներ 3584, DirectX 12 Ultimate, 3x լուռ հովացուցիչներ, 2x HDMI, 2x DP պորտ: PSU Thermaltake SPS-730M Smart SE 730W, 87% արդյունավետություն, APFC, կիսամյակային, 140 մմ օդափոխիչ խելացի ջերմաստիճանի կառավարմամբ, MTBF 100K ժամ, հարթ մալուխներ, պաշտպանություն – SCP, OPP, OVP: Միակցիչներ – 6x SATA, 3x Molex, 4x VGA 6+2 կեռ: Case Deepcool DP-ATX-E-SHIELD, Պատյանների աջակցություն մինչև E-ATX հիմնական տախտակ, 1x USB 3.0 և 2x USB2.0 պորտերով առջևում, 1x 5.25", 2x 3.5", 3x 2.5", նախապես տեղադրված 2x120 մմ FAN, TG պատուհան, փոշու զտիչներ ներքևում և վերևում, սև: Ներքևի ամրակ PSU: Լրիվ չափի ստեղնաշար KB Logitech K280e, USB, սև, չթափվող

				շասսի և ցածր պրոֆիլի ստեղներ, մինչև 10 միլիոն ստեղնաշարեր: Մկնիկ Logitech B100 USB, սև, մալուխի երկարությունը 1,8 մ, 1000 DPI, Կոճակների քանակը. 3. սև. Կցված է a8c9ff58.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Արդշինբանկ ՓԲԸ

2470102796740000

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by HOVSHSYAN HOVHANNES 2714920608
Date: 2022.05.02 18:20:09 AMST

ՎԱՃԱՌՈՂ

Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

25000-10152710100

01570457

Սերգեյ Աղագումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153
Date: 2022.04.29 12:15:47 AMST

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	հատ	26000.00	156000.00	6	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	6	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
4	հատ	184950.00	924750.00	5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	5	Պայմանագիրը ստորագրելուց հետո 90 օրվա ընթացքում
6	հատ	6900.00	138000.00	20	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	20	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
9	հատ	9990.00	99900.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
11	հատ	9990.00	99900.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո

							30 օրվա ընթացքում
13	հատ	12000.00	120000.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
17	հատ	97000.00	291000.00	3	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	3	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
18	հատ	611200.00	1833600.00	3	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	3	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
19	հատ	2829900.00	2829900.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
20	հատ	1689000.00	1689000.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
21	հատ	1080000.00	1080000.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
22	հատ	457000.00	2742000.00	6	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	6	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
23	հատ	1249980.00	2499960.00	2	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	2	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել

լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Արդշինբանկ ՓԲԸ

2470102796740000

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2022.05.02 18:20:27 AMST

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

25000-10152710100

01570457

Սերգեյ Աղագումյան

_____

/ստորագրություն/

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153
Date: 2022.04.29 12:16:01 AMST

Կ.Տ

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	32551170/2	DECT հերախոսներ						156000.00	156000.00	156000.00	156000.00	156000.00	156000.00	156000.00	156000.00
4	30237100/14	Համակարգչի իրան								924750.00	924750.00	924750.00	924750.00	924750.00	924750.00
6	32421200/13	Մալուխ						138000.00	138000.00	138000.00	138000.00	138000.00	138000.00	138000.00	138000.00
9	30237132/7	Փոխակերպիչ լար						99900.00	99900.00	99900.00	99900.00	99900.00	99900.00	99900.00	99900.00
11	30237132/10	Փոխարկիչ 2						99900.	99900.	99900.	99900.	99900.	99900.	99900.	99900.

								00	00	00	00	00	00	00	00
13	30237132/11	DP to DVI փոխարկիչ						120000.00	120000.00	120000.00	120000.00	120000.00	120000.00	120000.00	120000.00
17	30237490/1	Մոնիտոր						291000.00	291000.00	291000.00	291000.00	291000.00	291000.00	291000.00	291000.00
18	30237137/2	Տեսաքարտ						1833600.00	1833600.00	1833600.00	1833600.00	1833600.00	1833600.00	1833600.00	1833600.00
19	30211220/1	Սեղանի համակարգիչ 1						2829900.00	2829900.00	2829900.00	2829900.00	2829900.00	2829900.00	2829900.00	2829900.00
20	30211220/2	Սեղանի համակարգիչ 2						1689000.00	1689000.00	1689000.00	1689000.00	1689000.00	1689000.00	1689000.00	1689000.00
21	30211220/3	Սեղանի համակարգիչ 3						1080000.00	1080000.00	1080000.00	1080000.00	1080000.00	1080000.00	1080000.00	1080000.00
22	30211220/4	Սեղանի համակարգիչ 4						2742000.00	2742000.00	2742000.00	2742000.00	2742000.00	2742000.00	2742000.00	2742000.00
23	30211220/5	Սեղանի համակարգիչ 5						2499960.00	2499960.00	2499960.00	2499960.00	2499960.00	2499960.00	2499960.00	2499960.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Արդշինբանկ ՓԲԸ

2470102796740000

01540062

Հովհաննես Մովսիսյան

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2022.05.02 18:20:59 AMST

ՎԱՃԱՌՈՂ

Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

25000-10152710100

01570457

Սերգեյ Աղագումյան

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153
Date: 2022.04.29 12:16:16 AMST

_____
/ստորագրություն/
Կ.Տ

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	DECT հերախոսներ							

4	Համակարգչի իրան							
6	Մալուխ							
9	Փոխակերպիչ լար							
11	Փոխարկիչ 2							
13	DP to DVI փոխարկիչ							
17	Մոնիտոր							
18	Տեսաքարտ							
19	Սեղանի համակարգիչ 1							
20	Սեղանի համակարգիչ 2							
21	Սեղանի համակարգիչ 3							
22	Սեղանի համակարգիչ 4							
23	Սեղանի համակարգիչ 5							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
DECT հերախոսներ	հատ	
Համակարգչի իրան	հատ	
Մալուխ	հատ	
Փոխակերպիչ լար	հատ	
Փոխարկիչ 2	հատ	
DP to DVI փոխարկիչ	հատ	
Մոնիտոր	հատ	
Տեսաքարտ	հատ	
Սեղանի համակարգիչ 1	հատ	
Սեղանի համակարգիչ 2	հատ	
Սեղանի համակարգիչ 3	հատ	
Սեղանի համակարգիչ 4	հատ	
Սեղանի համակարգիչ 5	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն